

**ԳԱԼՈՒԿՍ ԿԻԼՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ**  
**ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ**

**ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԸՆԹԱՑՔ**

ԼԻԲԱՆԱՆԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԻ  
ԾՐԱԳԻՐԻՆ ՇՐՋԱՆԱԿԻՆ ՄԷՋ

Լիզպոն  
2020

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ - ՆԱԽԱԴՐԵԱԼՆԵՐ
2. ՊԱՐՈՒՆԱԿ - ՆՊԱՏԱԿՆԵՐ
3. ԴԱՍԸՆԹԱՑՔԻ ՁԵԻԱՉԱՓ - ԼԻԲԱՆԱՆ  
ԵՒ ԱՅԼ ՍՓԻՌՔԵԱՆ ՀԱՍԱՅՆՔՆԵՐ

## 1. Ներածական - Նախադրեալներ

Լիբանանահայրությունը կը հանդիսանայ արեւմտահայերէնի կենսունակութիւնը ապահովող ամենակարեւոր ուժերէն մէկը: Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքը (այսուհետ ԳԿՀ) կը մնայ հաստատակամ իր որոշումին մէջ՝ օժանդակելու կրթութեան եւ նորարարութեան վերաբերող ծրագիրներու, ներգրաւելով երիտասարդներն ու տեղւոյն համայնքը, միշտ որպէս հեռանկար ունենալով՝ արեւմտահայերէնի կենսունակութեան ապահովումը:

2019-ին ԳԿՀ-ն մշակեց յատուկ ռազմավարութիւն մը ուղղուած Լիբանանի հայկական դպրոցներուն եւ կրթական ծրագիրներուն, մասնաւոր ուշադրութիւն դարձնելով արեւմտահայերէնի դասաւանդումին եւ լեզուն փոխանցելու ձեւերուն վրայ: Այս պարունակին մէջ է որ ԳԿՀ-ն նախաձեռնած է ստեղծել գործող *Ուսուցիչներու զարգացումի ծրագիր մը (In-Service Teacher Development Program)*, Լիբանանի հայկական դպրոցներուն մէջ արեւմտահայերէնով դասաւանդողներուն համար: Ուսուցիչներու զարգացումի ծրագիրը կը հանդիսանայ ԳԿՀ-ի Լիբանանի ռազմավարութեան հինգ հիմնասիւններէն մէկը:

ԳԿՀ-ն մտադրած է ստեղծել **Արեւմտահայերէնով նիւթերու դասընթացք** մը (այսուհետ Դասընթացք), որ մաս պիտի կազմէ *Ուսուցիչներու զարգացումի ծրագիրին* եւ ամբողջութեամբ պիտի մատուցուի արեւմտահայերէնով:

Դասընթացքին հիմնական նպատակն է բարելաւել մասնակիցներուն արեւմտահայերէնի լեզուամտածողական իմացութիւնը: Դասընթացքը մշակելու համար, ԳԿՀ-ն պիտի համագործակցի տեղական ուժերու ինչպէս նաեւ միջազգային մասնագէտներու հետ՝ հիմնական նպատակ ունենալով զարգացնել մասնակիցներուն լեզուական, մշակութային, վերլուծողական եւ քննական մտածողութեան հմտութիւնները՝ *արեւմտահայերէնով*:

## 2. Պարունակ - Նպատակներ

### ՊԱՐՈՒՆԱԿ

Արեւմտահայերէնի դասաւանդումը Լիբանանի մէջ (ինչպէս պարագան է այլուր սփիւռքի մէջ) մեծ եւ բարդ մարտահրաւերներու եւ դժուարութիւններու դէմ յանդիման կը գտնուի այսօր. կը գիտակցինք որ այս մարտահրաւերները յաղթահարելն ալ բնականաբար նոյնքան բարդ պիտի ըլլայ: ԳԿՀ-ի համար, այս դժուարութիւններուն լուծում գտնելը, յատկապէս Լիբանանի մէջ - կ'ենթադրէ անելի լայն պատասխանատուութիւն մը քան պարզապէս նիւթական օժանդակութիւն տրամադրելը: Համոզուած ենք որ հարկաւոր է միասնական եւ արհեստավարժ ուժերով այս դժուարութիւններուն լուծումներ գտնել. դպրոցներու, ուսուցիչներու, աշակերտներու եւ արեւմտահայերէնի ուղղութեամբ ներդրումներ ընելով, ԳԿՀ-ն առիթը կ'ընծայէ որ այս մարտահրաւերներն ու դժուարութիւնները որոշ չափով յաղթահարուին, միշտ որպէս առաջնահերթութիւն ունենալով արեւմտահայերէնի կենսունակութիւնը. այս ուղղութեամբ նախատեսուած ներդրումները միջ ուժը պիտի ըլլան առողջ յարաբերութիւններու գոյացումին, այսօրուայ երիտասարդութեան եւ իր լեզուին միջեւ:

Կարելի է նշել որ վերջին տասնամեակներուն եւ մինչ օրս, արեւմտահայերէնը սփիւռքի մէջ կ'ընկալուի առաւելաբար իր ազգային պարունակին մէջ, եւ հետզհետէ կը դադրի ստեղծագործելու լեզու մը նկատուելի, ունակ բացուելու աշխարհին, ինչպէս նաեւ նոր ու այլալեզու յղացքներու: Լիբանանի հայկական դպրոցներուն արեւմտահայերէնի նկատմամբ ունեցած մօտեցումը ընդհանրապէս կը կայանայ լեզուն միայն պահպանելու մէջ եւ զայն գործածելու որպէս միջոց՝ անանդական եւ մշակութային արժեքներ փոխանցելու համար. այս իրականութիւնը գոյացած է հասկնալի պատճառներով, նամանաւանդ հաշուի առնելով պատմական եւ ներկայի ընկերային ու քաղաքական պայմանները: Սակայն, այս մօտեցումը օրէ օր կը դառնայ թերի եւ չի յաջողի ապահովել լեզուի կենսունակութիւնը որպէս շնչող եւ այժմեական օրկան:

Վերոնշեալը ի մտի ունենալով Է որ ԳԿՀ-ն կը փափաքի կենսական բարեփոխումներու ճամբով, մղիչ ուժ մը ըլլալ, որպէսզի ժամանակի ընթացքին գոյանայ արեւմտահայաստանի սերունդ մը, որ *կ'իւրացնէ* լեզուն եւ *կը ստեղծագործէ* իր մայրենի լեզուով, ինչպէս նաեւ կը գնահատէ եւ կ'արծարծէ հայկական իրականութիւնները՝ ժամանակակից մտածողութեան լոյսին տակ: Այս նպատակին հասնելու համար եւ արեւմտահայերէնը նոր սերունդներուն արդիւնաւետ միջոցներով փոխանցելու համար, անհրաժեշտ է ունենալ ուսուցիչներ՝ որոնք առաջին հերթին զինուած են համապատասխան եւ թարմ մանկավարժական մեթոտաբանութեամբ, որոնք ունին արհեստավարժ հմտութիւններ, եւ կարող են լեզուն դասաւանդել՝ ըլլալով հնարամիտ. սակայն, հարկ է նշել որ նոյնքան անհրաժեշտ է որ ուսուցիչները այս բոլորը կարենան ընել *արեւմտահայերէնով*, լեզուն դուրս բերելով իր պարունակէն եւ զայն արձանագրելով **մեր այսօրուան աշխարհին մէջ**:

Այս Դասընթացքին նպատակն է իրագործել վերոնշեալը՝ վերարժեւորելով եւ ամրապնդելով լեզուի դերը մեր աշխարհահայեացքներու կազմաւորումին մէջ - այսինքն արեւմտահայերէնը ընկալելով իր իւրայատուկ լեզուական, լեզուամտածողական, մշակութային եւ ընկերային պարունակին մէջ: Այս մօտեցումն է որ պիտի թարմացնէ լեզուի փոխանցումի եւ ուսուցումի կերպերը:

## ՆՊԱՏԱԿՆԵՐ

Դասընթացքը կը նպատակադրէ արեւմտահայերէնով (որպէս լեզու եւ միջոց) զարգացնել ուսուցիչներու արհեստավարժ հմտութիւնները, միեւնոյն ժամանակ զարգացնելով անոնց *արեւմտահայերէնի* լեզուական, մշակութային եւ վերլուծողական կարողութիւնները, ինչպէս նաեւ անոնց քննական մտածողութիւնը:

Այս օժանդակ Դասընթացքին հիմնական նպատակն է մասնակիցներուն հետ աշխատիլ հետեւեալ ուղղութիւններով՝ արեւմտահայերէնը ունենալով որպէս հիմնական միջոց.

- Արեւմտահայերէնով արծարծել եւ գոյացնել առկայ եւ ժամանակակից յղացքներ, եւ սատարել որ անձը ինքն իր մտքերուն եւ ընդհանրապէս այլազան յղացքներու ուղղութեամբ զարգացնէ քննական մտածողութիւն մը:
- Լեզուի գործածութեամբ զարգացնել ստեղծագործ եւ նորարար մտքեր:
- Լեզուի գործածութեամբ ընկալել, վերլուծել, քննել եւ իւրացնել ժամանակակից ընկերային իրավիճակներ եւ գիտակարգային գիտելիքներ:
- Նիւթերը կապել իրենց միջավայրին եւ քննական մտածողութիւն մը զարգացնել արեւմտահայերէնով, հետեւաբար վերահաստատել քննական մտածողութեան եւ լեզուական նուաճումներու միջեւ եղած ամուր կապը. քննական մտածողութիւնը մեծապէս կ'օգնէ բարելաւելու գրելու ունակութիւնը, լեզուի տիրապետումը եւ բանաւոր հաղորդակցութիւնը, այս բոլորը կ'ընդլայնեն լեզուի «փորձառութիւնը» եւ զայն կը դարձնեն աւելի իմաստային եւ «առընչելի» կեանքի իրականութիւններու հետ:
- Արեւմտահայերէնով զարգացնել արհեստավարժ հմտութիւններ եւ վերլուծելու կարողութիւններ. որեւէ դասընթացք պէտք է անպայման անդրադառնայ մտածողութեան եւ ընկալումի բարձր մակարդակի (higher-order thinking) ընթացքներուն, տրուած ըլլալով որ լեզուի զարգացումը եւ մտածողութիւնը սերտօրէն կապուած են իրար հետ:

Դասընթացքը պիտի որդեգրէ հետեւեալ միջոցները՝

- *Խորացնել ծանօթութիւնը յետեղեռնեան շրջանի արեւմտահայ գրականութեան եւ մշակոյթին, ինչպէս նաեւ մասնակիցներուն ներկայացնել արեւելքի եւ արեւմուտքի հայ մտածողներու կողմէ մշակուած սփիւռքեան «ընկերային փիլիսոփայութեան» վերլուծումները եւ սփիւռքեան ինքնութեան հասկացութիւնները:*
- *Վերլուծել նախա եւ յետեղեռնեան արեւմտահայ աշխարհասփիւռ մամուլը:*
- *Ծանօթանալ հայկական յառաջդիմական տեսութիւններու եւ արտադրութիւններու, անդրադառնալ փիլիսոփայական հիմունքներու, ժամանակակից ակադեմական եւ մտաւորական արտադրութիւններու (օրինակ՝ feminist տեսութիւններ, յետարդի ինքնութիւն եւ այլն):*

- *Ներկայացնել եւ վերլուծել համաշխարհային հիմնահարցեր (յատկապէս 2000-ականներու սերունդներուն վերաբերող). քաղաքականութենէն մինչեւ բնապահպանութեան աղետը, արհեստագիտութենէն մինչեւ աղքատութեան ճգնաժամը եւ սովը, ցեղապաշտութենէն մինչեւ պատերազմները, գաղթականներու տազնապէս մինչեւ ինքնութիւններու կառուցում...:*
- *Ներկայացնել այսօրուան մտածողները, ստեղծագործ անհատները, փիլիսոփաները եւ մտաւորականները որոնք կ'աշխատին, կ'ապրին եւ կ'արտադրեն արեւմտահայերէնով:*
- *Քաջալերել ընդհանուր հմտութիւններու զարգացումը արեւմտահայերէնով, ինչպէս օրինակ՝ հաղորդակցութիւնը եւ համագործակցութիւնը, ստեղծագործութիւնը եւ քննական մտածողութիւնը, որոնք բոլորն ալ մաս կը կազմեն կենսաստեւ կրթութեան (lifelong learning) եւ անհրաժեշտ են լեզուն ընդգրկուն ձեւով փոխանցելու համար:*
- *Վերահաստատել բնիկ հայախօս ուսուցիչներու կարեւորութիւնը որպէս լեզուական իմացութեան անզնահատելի աղբիւրներ:*
- *Բարելաւել մասնակիցներուն լեզուական հմտութիւնները ժամանակակից պարունակի մը մէջ, որպէսզի լեզուն հաղորդակից եւ առընչելի ըլլայ այսօրուայ երիտասարդներուն կեանքին:*
- *Սերմանել հետաքրքրութիւն արդի եւ ժամանակակից մշակոյթներու եւ համաշխարհային մշակութային հոսանքներու հանդէպ:*
- *Քաջալերել նորարարութիւնը լեզուի գործածութեան մէջ, որ պիտի նպաստէ արեւմտահայերէնով ստեղծագործելուն եւ արտադրելուն:*
- *Մատակարարել լեզուական գործիքներ որոնք պիտի օգնեն վերլուծելու այսօրուան աշխարհը, անոր մասին գրելու եւ խօսելու արեւմտահայերէնով:*

### 3. Դասընթացքի ձեւաչափ

#### ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ | ԼԻԲԱՆԱՆ

Նախնական փուլին, ԳԿՀ-ի պատկերացումով Դասընթացքը պիտի կայանայ Լիբանանի մէջ եւ պիտի ըլլայ տարեկան սեմինարի մը տեսքով, եւ պիտի մատուցուի որպէս օժանդակ նիւթ *Ուսուցիչներու զարգացումի ծրագիրին*, որ պիտի ստեղծուի Լիբանանեան համալսարանի մը հետ համագործակցաբար: Սեմինարները պիտի վարեն դասախօսներ եւ արհեստավարժ մասնագէտներ, որոնք դասընթացքներ պիտի վարեն արեւմտահայերէնով եւ «Master Class»-ի ձեւաչափով: Ի հարկին, կարելի է նաեւ այս դասընթացքը դարձնել առցանց կամ այլ ձեւաչափի:

Դասընթացքը բաց պիտի ըլլայ Լիբանանի *Ուսուցիչներու զարգացումի ծրագիրին* բոլոր մասնակիցներուն: ԳԿՀ-ն կ'ուզէ այս յատուկ դասընթացքը նաեւ մատչելի դարձնել սուրիահայ համայնքին, յատկապէս Սուրիոյ հայկական վարժարաններուն մէջ դասաւանդող ուսուցիչներուն: Դասընթացքը բաց պիտի ըլլայ նաեւ Մանկավարժութեան ոլորտին մէջ մասնագիտացող ԳԿՀ-ի նպաստառու ուսանողներուն:

#### ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ | ԱՅԼ ՍՓԻՒՌԵԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

ԳԿՀ-ն կը միտի այս Դասընթացքը զարգացնելու եւ զայն վերածելու աւելի ընդլայնուած ծրագրի մը, որ հասանելի եւ յարմարեցուած ըլլայ տարբեր սփիւռքեան համայնքներու: Դասընթացքը պիտի ձեւաւորուի եւ հիմնուած պիտի ըլլայ այսօրուայ հայախօսներու պահանջներուն վրայ, նամանաւանդ անոնց՝ որոնք արեւմտահայերէնով կ'աշխատին եւ կ'արտադրեն (յատկապէս արեւմտահայերէնով աշխատող ուսուցիչներու կամ հայկական դպրոցներուն մէջ աշխատող անձերու):

Իր ձեւաչափով, Դասընթացքը պիտի սատարէ նոր մտածողական յղացքներու իւրացումին, լեզուական նոր հմտութիւններու ձեռք բերումին, եւ պիտի նպաստէ որ որակաւոր կրթական փորձառութիւնները ըլլան սահուն, ճկուն եւ բնականոն: Դասընթացքը նաեւ կը միտի տրամադրելու մատչելի եւ հասանելի հոլմ նիւթեր, որոնք կրնան զարգանալ եւ կրկին գործածուիլ որպէս լեզուն դասաւանդելու արդի միջոցներ. դասախօսութիւնները եւ սեմինարները ձեւաւորուած պիտի ըլլան դիմակայելու մարտահրաւերներ, մտածելու եւ վերլուծելու առիթներ, եւ ո՛չ թէ հերթական դասեր: